

Արսեն Գրիգորյան

Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի հայցորդ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՄԱԼՐՈՒՄՆԵՐԸ (2000-2004 ԹԹ.)

1999 թ. դեկտեմբերի 31-ին Բ. Ելցինը հայտարարեց իր հրաժարականը: Լինելով ՍՍԿԿ Քաղբյուրոյի հին գվարդիական՝ նա չէր կարող ուղղակի հեռանալ քաղաքական թատերաբեմից: Բ. Ելցինը վաղաժամ հրաժարական տվեց՝ իր ժամկետը լրանալուց մեկ տարի առաջ: Սա նոր գործընթացների խթանման նախապայմաններից մեկն էր, որը ՌԴ-ի արդի պատմության այս շրջանում անհրաժեշտություն էր: Վ. Պուտինը տարբերվում էր Բ. Ելցինից իր բնավորությամբ և կշռադատվածությամբ: Նա քաջածանոթ էր կրեմլյան «գլխացավերին», որոնք պատուհաս էին դարձել երկրի համար: Վ. Պուտինի՝ իբրև նախագահի հետևորդի առաջադրման և նախագահ Բ. Ելցինի հրաժարականի շուրջ հնչում են ամենատարբեր տեսակետներ ու վարկածներ: Բ. Ելցինի գլխավոր նպատակը այս պարագայում ՌԴ-ում հաստատված քաղաքական համակարգի շարունակականության ապահովումն էր:

Նախագահական ընտրություններից ամիսներ առաջ շատերը այն կարծիքին էին, թե Վ. Պրիմակովը ավելի ծանրակշիռ թեկնածու է, քան Վ. Պուտինը: Այդ ընթացքում աննկատ մնաց մեկ փաստ: Ե. Պրիմակովի կողմից «Ողջ Ռուսաստանը հայրենիք»-ի («ОБП») կուսակցության ներքո հանդես գալով և նախագահ առաջադրվելու հայտարարությամբ, կատարվեց ուժերի վերադասավորություն, ինչը խառնաշփոթ առաջացրեց ձախ ուժերի ընտրազանգվածում: Արդյունքում ընտրազանգվածի այդ հատվածը սկզբնապես վերդասավորվեց Ե. Պրիմակովի շուրջ, իսկ 2000 թ փետրվարի 4-ին ընտրարշավից դուրս գալու նրա հայտարարությունից հետո այդ ընտրազանգվածի ձայները փոխանցվեցին Վ. Պուտինին: Այս մարտավարական կոմբինացիան արտաքուստ կրկնեց 1996 թ. ընտրարշավի ձայների վերաբախչման տրամաբանությունը, սակայն մեկ վերապահումով: Վ. Պուտինը ընտրարշավի ժամանակ իր շուրջը կենտրոնացրեց իրական ազդեցության ռեսուրս ունեցող անհատների, նրանց հետագայում իրեն հենարան դարձնելու նպատակով: Վ. Պուտինին ակնհայտ էր, որ միայն վարչական ռեսուրսներով և նոր կուսակցության ստեղծումով հնարավոր չէ իր կողմը գրավել ընտրազանգվածի մեծ մասը, առավել ևս եթե ցանկանում է հետագայում էլ ունենալ հասարակության օժանդակությունը:

«Ողջ Ռուսաստանը հայրենիքը» («ОБП»)-ի լիդերների դեպքում խնդիրը մի փոքր այլ էր: Նրանք չէին կարողացել առաջատար դիրքեր զբաղեցնել ՌԴ-ի Պետական Դումայում: Այս իմաստով ՌԴ-ի քաղաքական համակարգը նախագահականից պառլամենտականի վերափոխման Ե. Պրիմակովի և ՌԴԿԿ-ի տարբերակը, արդեն իրական չէր, քանի որ ստեղծված պայմաններում «Ողջ Ռուսաստանը հայրենիքը» («ОБП»)-ի և «ՌԴԿԿ»-ի («КПРФ») դաշինքը չէր ապահովվում անհրաժեշտ մեծամասնությունը Դումայում: Վ. Պուտինը ևս ձեռքերը ծալած չէր նստել: Նա կարողացել էր Դումայում կոմպրոմիսի հասնել «ՌԴԿԿ»-ի հետ գլխավոր կետերից մեկում: Խոսքը վերաբերում է Գ. Սելեզնյովի ՌԴ-ի Պետական Դումայում խոսնակի ընտրմանը: Այս պայմաններում ՌԴ-ի քաղաքական համակարգի ազդեցության բևեռը Պետական

Դուժայից աստիճանաբար տեղափոխվեց Կրեմլ: Ուստի Վ. Պուտինի և Ե. Պրիմակովի միջև համաձայնությունը երկուստեք փոխշահավետ էր: Կրեմլի ընտրած մարդիկ երկարաժամկետ խաղացողներ էին՝ Ս. Շոյգու, Բ. Գռիզլով, Ա. Կարելին, Ե. Պրիմակով, Դ. Մեդվեդև, Տ. Մատվիենկո, Ի. Իվանով և այլն: Այս մարդիկ հետագայում պետք է դառնային նորընտիր նախագահի հենարանն ու նոր պետական ապարատի անդամները: Դա է վկայում Ե. Պրիմակովին Ա.Ա.Պ*.-ի նախագահի պաշտոնում առաջադրումն ու հաստատումը 2001 թ¹:

2000 թ. մարտի 26-ի ՌԴ-ի նախագահական ընտրություններին մասնակցեցին ընտրողների 66,8%-ը: Վ. Պուտինը ստացավ ՌԴ-ն ձայների 52,94%, Գ. Ջյուզանովը՝ 29,21%, Գ. Յավլինսկին՝ 5,8%²:

Հաղթելով 2000 թ. նախագահական ընտրություններում՝ Վ. Պուտինը մայիսի 17-ին Պետական Դումային ներկայացրեց նոր վարչապետի՝ Մ. Կասյանովի թեկնածությունը, որը հաստատվեց ձայների մեծամասնությամբ³:

1999 թ դեկտեմբերի դումայական և 2000 թ մարտի նախագահական ընտրություններով Վ. Պուտինը ամուրի հենարան ստեղծեց իր հետագա գործողությունների համար: Նրա աշխատանքային ծրագիրը նախատեսում էր լուրջ փոփոխություններ ՌԴ-ի ներքաղաքական կյանքում: Վ. Պուտինը նախագահական ընտրություններում ավելի հստակեցրեց իր սոցիալ-տնտեսական քաղաքականությունը:

Առաջինը ՌԴ-ի իշխանական ուղղածից կառուցվածքի կարգավորման հարցն էր: 1990-ականների հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական պայմաններում խնդիրը ավելի էր խորացել: ՌԴ-ի պաշտոնական մարմինների կողմից կատարված հետազոտությունները ցույց են տալիս, որ 1993-1999 թթ. Դաշնության սուբյեկտներն ի վիճակի չեն եղել ինքնուրույն լուծելու սոցիալ-տնտեսական խնդիրները տեղերում⁴: Այս փաստը ցույց տվեց, որ սուբյեկտների ղեկավարները կենտրոնը դիտարկել են իբրև բյուջետային լրացուցիչ միջոցներ հատկացնող մարմին: Դրա մասին էր վկայում սուբյեկտների բյուջետային մասնաբաժինը, որը 1993 թվականի դրությամբ 25%-ից հասցվել էր 40%-ի⁵: Այս տեսակետից 1993 թ սեպտեմբեր-հոկտեմբերի ճգնաժամից անենահաջող կերպով օգտվել էին ՌԴ-ի ռեգիոնները: Այս փաստերից Վ. Պուտինը բոլորովին այլ հետևություններ արեց: Նա որոշեց փոխել, ՌԴ-ի քաղաքական համակարգի ներսում ստեղծված ուժերի հարաբերակցությունը: Խնդիր դրվեց վերացնել ՌԴ-ի կենտրոնի և շրջանների միջև հակասությունները: 2000 թ. գարնանը ՌԴ-ի Պետական Դումա ուղարկեց օրենսդրական կարգավորումների փաթեթ: Աշխատանքը գործնականում արագ և արդյունավետ կազմակերպելու համար 2000 թ. մայիսի 13-ին Վ. Պուտինը ստորագրեց № 849 հրամանագիրը, որով ՌԴ-ի տարածքը բաժանեց յոթ տարածքային օկրուգների⁶: Յուրաքանչյուր օկրուգում նշանակվեց ՌԴ-ի նախագահի լիազոր ներկայացուցիչ: Վ. Պուտինը հստակեցրեց կարճաժամկետ և երկարաժամկետ այն հարցերը, որոնցով նախագահի լիազոր

* Առևտրային-արդյունաբերական Պալատ 2001 թ. (Վ. Պուտինի հրամանով առևտրա-արդյունաբերական դոկորտի բոլոր օրինագծերը ստուգվում էին այս օրգանի կողմից և նոր ներկայացվում նախագահին):

¹ Տե՛ս «Коммерсант», № 229, 15.12.2001:

² Տե՛ս «Российская газета», № 68, 07.04.2000:

³ Фонд УИС Россия, Гос. Дума РФ, третий созыв, Заседание: 17.05.2000, Бюлл. № 25(473), ч. 1, с. 5-33:

⁴ Տե՛ս **Дульшиков Ю.**, Региональная политика и управление, М., 2001, с. 18:

⁵ **Паин Э.**, Сепаратизм и федерализм в современной России.// Куда идет Россия? Альтернативы общественного развития/, под ред. Т. И. Заспеской, М., 1994, с. 160, 164.

⁶ Տե՛ս Собрание законодательства Р Ф, 2000, № 20, с. 2112:

ներկայացուցիչները պետք է զբաղվեին սուբյեկտներում: Առաջնահերթ լիազոր ներկայացուցիչները պետք է սեղմ ժամկետներում շտկեին սուբյեկտներում հայտնաբերված օրենսդրական շեղումները սահմանադրությունից: Ռեզիդենտներից աչքի էին ընկել Բուրյաթիան, Թաթարստանը, Բաշկիրիան, Սախան և Տուվան¹: 2001 թ. հունվարի 30-ին նախագահ Վ. Պուտինը կատարեց հերթական օրենսդրական փոփոխությունը և լիազոր ներկայացուցիչների գործունեության վերահսկողությունը դրեց նախագահի աշխատակազմի ղեկավարի վրա²: Այս քայլը կազմակերպչական խընդիրներ լուծելուց զատ անուղղակի իջեցրեց նաև սուբյեկտների կարգավիճակը: Նախագահի լիազոր ներկայացուցիչները նաև հաստատեցին Կրեմլի ներկայությունը սուբյեկտներում: Ինչը դժգոհություն առաջացրեց սուբյեկտներում: ՌԴ-ի դաշնային օրենքների, որոշումների կատարման նկատմամբ նման կոշտ մոտեցումը սահմանափակեց սուբյեկտների գործունեության սահմանը: Իրավաբանական գրականության մեջ Վ. Ժուտինի այս քայլերը դիտարկվում են օրենսդրական հակասությունների վերացման տեսակետից: Այս մոտեցումը քողարկում է 1993 թ. նախագահ Բ. Ելցինի կատարած խախտումները իրավիճակի պատասխանատվությունը հասցեագրելով ՌԴ-ի սուբյեկտներին:

Վ. Պուտինի առանցքային քայլերից է ՌԴ-ի Դաշնային Ժողովի՝ Վերին պալատի ձևավորման սկզբունքների փոփոխությունը: 1995 թ. սկսած Սենատը կազմավորվում էր սուբյեկտների օրենսդիր և գործադիր մարմինների ղեկավարներից, ուներ ավելի լայն լիազորություններ: Այնուհանդերձ, այն մշտապես գործող մարմին չէր:

Նոր նախագահի առաջարկը շատ տրամաբանական և պարզ էր՝ բացառել տեղական գործադիր ներկայությունը սենատում.

փոխարինել այն շրջաններից ընտրվող ներկայացուցիչներով.

դարձնել մշտական գործող ինքնուրույն օրենսդրական մարմին:

Սենատի կառուցվածքն ու գործունեության կարգը (1995-2000 թթ.) հաստատում էին ՌԴ-ի ապակենտրոն կառուցվածքը: Ուստի Վ. Պուտինի այս նախաձեռնությունը, չոգևորեց ՌԴ-ի սուբյեկտների ղեկավարներին: Վերջիններս օրինագծին դեմ քվեարկեցին: Պետական Դումայում ևս ձայները ոչ միանշանակ բաժանվեցին: Դումայում նախագահը ուներ մեծամասնություն, բայց անհրաժեշտ 2/3-ի ապահովման համար ձայները բավարար չէին: Շրջանցել Սենատը՝ դարձավ խնդրահարույց: Քննարկումների ամենաեռանդուն շրջանում Վ. Պուտինը առաջարկեց ստեղծել հանձնաժողով՝ օրինագծի համաձայնեցման և արագ ընդունման համար: Հանձնաժողովը ստեղծվեց հուլիսի 8-ին և անցկացրեց 4 նստաշրջան՝ քննարկելով ու համաձայնեցնելով առկա նախագծի անհանգստացնող կետերը³: Պահը բաց չթողնելով՝ Վ. Պուտինը իր տարեկան ուղերձում խոսեց ՌԴ-ի քաղաքական համակարգի փոփոխման պատճառների մասին⁴:

Այս ռազմավարությունը Վ. Պուտինին հնարավորություն տվեց շոշափելու Սենատում տիրող տրամադրությունները: Պարզ էր, որ շրջանները չէին ցանկանում կորցնել 1993-1998 թթ. ձեռք բերված լայն լիազորությունները: Կրեմլը խնդիր էր դրել վերափոխել Վերին պալատի ձևավորման սկզբունքները: Վարչա-իրավական համա-

¹ Стѹ Дульщикѹ Ю., Региональная политика и управление, М., 2001, с. 47:

² Стѹ «Российская газета», № 21, 31.01.2001:

³ Фонд УИС Россия, Гос. Дума РФ, третий созыв., Заседание: 19.07.2000, Бюлл. № 41(489), ч. 1, с. 5-64.

⁴ Стѹ Борцов Ю., Владимир Путин, Ростов на Дону, 2001, с. 486:

կարգի լիազորություններով օժտված օրենսդիր մարմինը պարարտ հող էր ստեղծում օրենքների նկատմամբ անհետևողական վերաբերմունքի համար և թույլ չէր տալիս կարգավորել ռեզիդենտների խնդիրները: Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել էր, որ 1992-1996 թթ. արտադրության անկումը ռեզիդենտներում տատանվում էր 6-75%-ի սահմաններում¹: Ամիմաստ էր վերահսկողություն պահանջել այն մարմիններից, որոնց ղեկավարներն իրենք էին կազմում վերին պալատը ՌԴ-ում:

Ըստ ՌԴ Սահմանադրության նրանք ներկայացվում էին իբրև օրենսդիրներ, սակայն զուրկ մշտական գործունեության լիազորություններից²: Այսինքն Սենատը ստանում էր օրենսդիր լիազորություններ, սակայն «պատասխանատու» էր գործադիր իշխանության ղեկավարին: Այնինչ գործադիրը պետք է պատասխանատու լիներ օրենսդրի առջև: Վ. Պուտինի առաջարկը շատ պարզ լուծման տարբերակ էր, որը փոփոխություն չմտցնելով ստեղծված քաղաքական համակարգի մեջ՝ վերափոխում էր նրա առանձին մարմնի ներքին կառուցվածքն ու հավասարակշռում նախկին վիճակը:

Սենատի քննարկումների ընթացքում պարզ դարձավ, որ սուբյեկտները ձգտում են հնարավորինս ազատվել Կենտրոնից: Սա չէր մտնում Կրեմլի ծրագրերի մեջ, քանի որ խնդիր կար թուլացնելու սուբյեկտների ազդեցությունը կենտրոնի վրա:

2000 թ. հունիսի 23-ին Դաշնային օրինագիծը անցնելով Դումայի 3-րդ ընթերցմամբ՝ մերժվեց Սենատում: Օրենքն ընդունվեց հակառակ վերին պալատում տեղ գտած տրամադրությունների: Արդյունքում այն միայն ձգձգվեց: Պարադոքսն այն էր, որ օրինագծի հարցում Վ. Պուտինը լիարժեք օժանդակություն գտավ ի դեմս ՌԴԿԿ-ի³: Սա ևս ծանրակշիռ փաստարկ էր սուբյեկտների ղեկավարներին սաստելու համար: Օրինագիծն ընդունվեց սկզբնապես ՌԴ-ի Պետական Դումայում 2000 թ. հուլիսի 19-ին: Հետագա լարված քննարկումներից հետո այն ընդունվեց նաև Դաշնային խորհրդում 2000 թ. հուլիսի 26-ին: «ՌԴ-ի Դաշնային խորհրդի կազմավորման մասին» օրենքով վերին պալատը կազմավորելու էին սուբյեկտների ղեկավարների ներկայացուցիչները: Յուրաքանչյուր սուբյեկտ ներկայացնելու էր երկու պատգամավոր: Նրանցից մեկին ընտրելու էր սուբյեկտի օրենսդիր մարմինը, մյուսին նշանակելու էր սուբյեկտի ղեկավարը: Օրենքը ուժի մեջ մտավ 2000 թ. օգոստոսի 5-ից⁴: Այնուհանդերձ, ՌԴ-ի քաղաքական համակարգում ստեղծված հարաբերությունները բավականին խոր արմատներ էին գցել: Վ. Պուտինը շատ լավ հասկացավ, որ Դաշնության սուբյեկտների ղեկավարները շատ հարցերում ինքնուրույն էին դարձել: Այդ երևույթը պարունակում էր լուրջ վտանգներ: Անհրաժեշտ էր սուբյեկտների զարգացումները կենտրոնի համար վերահսկելի դարձնել: Այստեղ Վ. Պուտինը գնաց շատ վճռական քայլի՝ առաջ քաշելով Պետական խորհրդի գաղափարը: Առաջին անգամ այդ մասին հայտարարվեց Դումայում վերին պալատի կազմավորման օրինագծի փոփոխման նախօրյակին⁵: Այս գաղափարը լրջորեն քննադատվեց դումայական խմբավորումների կողմից: ՌԴ-ի սուբյեկտների ղեկավարները հասկացան նախագահի առաջարկի էությունը: Պետական խորհուրդն այն հրապարակել էր, որտեղ նա-

¹ Տե՛ս Дутьчиков Ю., Региональная политика и управление, М., 2001, с. 51:

² Տե՛ս Конституция Российской Федерации (офици. публ.) М., 1997, с. 43:

³ Տե՛ս Медведев Р., Владимир Путин. Четыре года в Кремле (диалог), М., 2004, с. 155:

⁴ Տե՛ս Собрание законодательства РФ., М., 2000, № 32., с. 3336:

⁵ Տե՛ս «Аргументы и факты», № 32, 09.08. 2000:

խագահը սուբյեկտների ղեկավարների, ուժային մարմինների, 12 աշխատանքային խմբերում տարածքային օկրուզների և իշխանության թևերի ղեկավարների մասնակցությամբ քննարկելու էր երկրի կյանքում առանցքային նշանակություն ունեցող խնդիրներն ու հարցերը: Սուբյեկտի ղեկավարները ստիպված էին զիջել իրենց դիրքերը Սենատում՝ նախագահի նոր ստեղծված Պետական խորհրդում տեղ ունենալու համար: Սրանով Վ. Պուտինը որոշեց թուլացնել ՌԴ-ի Դաշնային ժողովում իրենց տեղը կորցրած սուբյեկտների ղեկավարների դժգոհությունը: «Պետական խորհուրդն» իր աշխատանքի կազմակերպման մեջ կրկնեց հին խորհրդային Քաղբյուրոյի շատ ֆունկցիաներ:

Վերը նշված փոփոխություններին զուգահեռ Կրեմլը էապես վերանայեց իր մոտեցումները սոցիալ-տնտեսական խնդիրներում: Նոր նախագահը բացառեց որևէ տընտեսական ծրագրի առաջադրումն ու իրագործումը, առանց պետության կողմից մասնավոր սեփականության իրավական դաշտի ապահովման: Ըստ Վ. Պուտինի այդ պայմանները դեռ լիարժեք հաստատված չէին¹: ՌԴ-ի ներքին կյանքում կանոնների պահպանման գրավականը նոր նախագահը տեսնում էր պետության վերահսկող ֆունկցիաների վերականգնման մեջ: Վ. Պուտինը չսահմանափակվեց փաստաթղթի ընդունմամբ, այլ սկիզբ դրեց պետության և խոշոր բիզնեսի տարանջատման գործընթացին: Նա հասկացրեց բոլորին, որ ինքը այլ կերպ է պատկերացնում «ազատ շուկայական տնտեսության սկզբունքներն ու չափանիշները»: Այդ սկզբունքները առավել գործնական հարթություն տեղափոխելու համար նա կազմակերպեց հանդիպում երկրի ձեռնարկատերերի հետ 2001 թ. հուլիսի 26-ին: Թեև հանդիպման ժամանակ նա հայտարարեց, որ «մասնավորեցման» արդյունքները չեն վերանայվելու, այնուհանդերձ, կարծում ենք, որ այդ քայլը ավելի շուտ կանխարգելիչ նպատակներ ուներ, քանի որ դրանով նա զրկում էր մի խումբ մոնոպոլիստների իրենց շարքերը համախոհներով համալրելու հնարավորությունից: Դրա մասին է խոսում այն, որ ձեռնարկատերերի հետ հանդիպման ընթացքում խոսվեցին և համաձայնվեցին տնտեսության մեջ «հավասար խաղի կանոնների հաստատման սկզբունքները»: Այս ռազմավարությունը ջլատեց և թուլացրեց խոշոր բիզնեսի ազդեցությունը պետական ապարատի վրա, քանի որ զրկեց նրանց ամենակարևոր բաղադրիչից՝ ընդհանուր շահերից: Այսուհետ, ՌԴ-ում հանգիստ և արդյունավետ կարող էին գործել խաղի նոր կանոններին հետևող գործարարները: Կանոնները խախտողների համար Վ. Պուտինը 2001 թ. օգոստոսի 7-ին ընդունեց օրենք «Հանցավոր կերպով ձեռք բերված եկամուտների օրինականացման (լվացման) հակազդման մասին»²: Օրենքը ըստ էության պետության կոշտ վերահսկողության տակ էր վերցնում ֆինանսական ակտիվների ողջ շրջանառության գործընթացը: Սա մտրակի և թըխվածքաբլիթի քաղաքականության յուրովի կիրառման պրակտիկա էր, որով Կրեմլը կոշտ ձևով սաստեց ՌԴ-ի նոր բուրժուազիայի հավակնությունները ներքաղաքական կյանքում: Ավելին, Կրեմլը վերադարձրեց երկու գլխավոր հեռուստատեսային ալիքների նկատմամբ բացարձակ վերահսկողությունը, որով զրկեց մոնոպոլիստներին ինֆորմացիոն դաշտում մանիպուլյացիաներ կատարելու նախկին լծակներից: Նոր նախագահը քաջ գիտակցում էր ՌԴ-ին նետված մարտահրավերները:

¹ Տե՛ս **Борцов. Ю., Владимир Путин**, Ростов на Дону, 2001, с. 479:

² Տե՛ս «Российская газета», № 151, 9.08.2001:

ՌԴ-ի սոցիալ-տնտեսական զարգացման յուրահատկությունները դիտարկելիս մենք տեսնում ենք 1990-ական թվականներին պետության կողմից վերահսկվող և կարգավորող ֆունկցիաների բացակայությունը: Ինչ-որ իմաստով հենց այս փաստը դարձավ ռուսաստանյան բուրժուազիայի սանձարձակ վարքի հիմնական պատճառը: Այս իրավիճակը շտկելու և ապագայում այս նոր խավը վերահսկելի դարձնելու համար ՌԴ-ի նախագահ Վ. Պուտինը կատարեց շատ լուրջ փոփոխություն: Խոսքը տվյալ դեպքում «Հարկային ոստիկանության» մասին է, որի ստեղծումը հիմնավորվել էր երկրի ստվերային տնտեսության դեմ արդյունավետ պայքարի նկատառումներով: Վ. Պուտինի մոտ այս կառույցը վստահություն չէր վայելում: Նման դիրքորոշումը ուներ լուրջ հիմքեր: Փաստն այն էր, որ այս կառույցի գործունեության տարիներին ռուսական նոր բուրժուազիայի նյութական միջոցները անվերահսկելի կերպով մեծացրել էին իրենց ազդեցությունը ՌԴ-ի տնտեսության մեջ: Պարզ էր, որ այդ կառույցը վերածվել էր մոնոպոլ բուրժուազիայի ապահովագրական մեխանիզմի: Այս երևույթին վերջ տալու համար նախագահ Վ. Պուտինը 2003 թ. մարտի 11-ին լուծարեց ՌԴ-ի հարկային ոստիկանությունը: Նրա գույքը փոխանցվեց «ՌԴ-ի թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի պետական կոմիտեին», իսկ լիազորությունները՝ ՌԴ-ի ներքին գործերի նախարարին¹: Այս կառուցվածքային փոփոխությունը ունեցավ շատ լուրջ հետևանքներ: Մասնավորապես քրեական պատասխանատվության երթարկվեցին «Ռոսնեֆտ»-ը, «Լուկոյլ»-ը, «Ավտովագ»-ը, նյութական միջոցների հափշտակման մասնակից մի շարք խոշոր գործարարներ, որոնց մեջ ամենից շատ հիշատակվում էր Բ. Բերեզովսկին²: Նման օլիգարխի հետապնդումը խոսում է այն մասին, որ Վ. Պուտինը, ի տարբերություն իր նախորդի, չէր պատրաստվում նրանց դիտարկել իբրև ուժի կենտրոն: Ավելին, նա օրինական ձևով խլում էր այն բոլոր միջոցները, որոնք յուրացվել էին 1990-ական թվականներին ապօրինի կերպով: Ընդ որում Կրեմլը իր վերահսկողության տակ վերադարձրեց խոշոր ընկերություններից մի քանիսին: Տնտեսական հանցագործության համար պատասխանատվության ենթարկվելուց հետո էլ այդ ընկերությունների գործունեությունը նշանակում էր, որ Կրեմլը թույլ էր տվել նրանց գործունեությունը որոշակի պայմաններով: Գործադիր իշխանության նման պրակտիկական կանխարգելիչ նպատակներ ուներ: Թերևս հենց սա էլ կարելի է «հավասար խաղի կանոնների» հաստատման գործնական մեկնարկ համարել: ՌԴ-ի մամուլում այս միջոցառումները գնահատվեցին իբրև հարված մոնոպոլ ձեռնարկատիրությանը³: Իրականում սա Կրեմլի նախագուշացումն էր նոր ռուսական բուրժուազիային, քանի որ ըստ էության ՌԴ-ում չկար որևէ խոշոր ձեռնարկություն, որն իր կապիտալը կուտակած լիներ օրինական և արդար ճանապարհով: Մյուս կողմից, եթե պատասխանատվության ենթարկվեին բոլոր ձեռնարկությունները, ապա ՌԴ-ում գործող խոշոր ընկերություն չէր մնա: Ստեղծված երկակի իրավիճակը ստիպեց արդեն գործնականում հետևել Կրեմլի կողմից թելադրված կանոններին:

Վերը նշված քայլերը նպատակ ունեին ՌԴ-ում ապահովելու սոցիալ-տնտեսական վերափոխումների բարենպաստ միջավայր: Ընդ որում այդ քայլերից կառավարության ներկայացուցիչներից ոչ բոլորն էին գոհ: Այստեղ առանձնահատուկ էր

¹ Տե՛ս «Российская газета», № 55, 25.03.2003:

² Տե՛ս **Медведев Р.**, Владимир Путин. Четыре года в Кремле (диалог), М., 2004, с. 167-170:

³ Տե՛ս «Коммерсант», № 147, 20.08.2002:

վարչապետ Մ. Կասյանովի դիրքորոշումը, որը տարբերվում էր Վ. Պուտինի սկզբունքներից¹: Տարածայնությունը մոնոպոլիստների պատասխանատվության և սեփականաշնորհման արդյունքների վերանայման շուրջ էր: Ըստ Մ.Կասյանովի սեփականաշնորհման արդյունքները անդառնալի են և որևէ բացառություն այս հարցում չի կարող լինել: Այս հարցի հետ կապված՝ ճիշտ է այն տեսակետը, որ «ընտանիքը» դադարեց ազդեցիկ դեր ունենալ հասարական-քաղաքական կյանքում²: «Ընտանիքի» տակ հասկացվում է Բ. Ելցինի կառավարման շրջանում նրա շուրջ հավաքված ֆինանսա-տնտեսական խմբավորումը, որն իր ազդեցության տակ էր պահում նաև երկրի սոցիալ-տնտեսական կյանքը՝ Ելցելով իր շահերից:

Վ. Պուտինի և վարչապետի միջև տարածայնությունները 2000-2004 թթ. ընթացքում ավելի խորացան: Դրա մասին է խոսում այն, որ կառավարությունում առանձին ներկայացուցիչներ ձգտում էին մեծացնել սեփական դիրքերը ի հաշիվ վարչապետի լիազորությունների կրճատման³: Մ. Կասյանովը ավելի հակված էր արտաքին խոշոր վարկերի ներկայությանը ՌԴ-ում, կողմ էր սեփականաշնորհման ընթացքում ստեղծված շուկայական տնտեսության իրավիճակի պահպանմանը և դեմ էր պետության դերի մեծացմանը: Վ. Պուտինը դեմ էր խոշոր միջազգային վարկերին, որ տրամադրվում էին Համաշխարհային բանկի կողմից՝ գտնելով, որ ՌԴ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ տնտեսական դիմամիկ զարգացման համար⁴: Դրա մասին է խոսում այն, որ 2005 թ. շտապ կարգով ՌԴ-ի կառավարությունը մարեց բոլոր միջազգային վարկերը՝ միաժամանակ հրաժարվելով նոր վարկերից⁵: Ի հակադրումն դրա Վ. Պուտինն առավել արդյունավետ էր համարում արտասահմանյան միջին և մանր ներդրումներն ուղղված ՌԴ-ի տնտեսության առանձին ոլորտում փոխշահավետ համագործակցությանը⁶: Այս մոտեցումը նպատակ ուներ կանխել ՌԴ-ի բնական ռեսուրսների անվերահսկելի յուրացումը: Նման եզրակացության էին եկել ՌԴ-ի Դաշնային խորհրդի վերլուծական կենտրոնում⁷:

Հետագա քայլերը միայն մեկ նպատակ էին հետապնդում. ամեն գնով կանխարգելել հետագայում խոշոր կապիտալի և պետական իշխանության մասն սերտաճումը: Այս շարքում ամենասկանդալային գործը կապված է «ՅՈՒԿՈՍ» ընկերության հետ: Իր ստեղծման պահից այն խուսափել էր հարկային պարտավորություններից: 2002-2003 թթ. այս ընկերությունը ավելի քան 582 միլիարդ ռուբլով խուսափել էր հարկերից⁸: Հետագա ստուգումներից պարզ դարձավ, որ 1993 թ. սկսած ընկերության հարկային պարտավորության չափը կազմել է ավելի քան 11 միլիարդ դոլար: Արդյունքում ընկերությունը լուծարվեց: Սկանդալի մեջ խառնված շատ գործիչներ ապաստան գտան Արևմուտքում: Այդ աղմուկի մեջ չէին նշվում իրական դրդապատ-

¹ Տե՛ս Герасимов Г., История современной России: поиск и обретение свободы, М., 2008., с. 291:

² Տե՛ս Согрин В., նշվ. աշխ., М., 2001, с. 244:

³ Տե՛ս Отечественная история России новейшего времени 1985-2003 гг., под ред. В. Безбородова, М., 2003, с. 461:

⁴ Борцов Ю., Владимир Путин, М. 2001, с. 441-444.

⁵ Տե՛ս «Коммерсант Власть», № 5, 07.02.2005:

⁶ Տե՛ս «Коммерсант Власть», № 42, 11.03.2005:

⁷ Шохин С., Проблемы управления государственным долгом Российской Федерации и использование иностранных инвестиций (по материалам проверок Счетной палаты Российской Федерации)// Государственный долг Российской Федерации: Проблема управления и контроля, Круглый стол Совета Федерации РФ, Выпуск 20, ответ. ред. Б. Г. Приображенский, М., 2002, с. 20.

⁸ Տե՛ս «Независимая газета», № 144, 17.07.2003:

ճառները: «ՅՈՒԿՕՍ»-ի տնօրենը՝ Մ. Խողորկովսկին գաղտնի ֆինանսավորում էր ընդդիմադիր Կոնկուսին և Յաբլոկոյին: Դրանով նա ցանկանում էր օգտագործել քաղաքական դաշտում տեղ ստացած ուժերին և ճնշում գործադրել Կրեմլի վրա: Պարզ էր, որ այդ երկակի խաղը անհետևանք չէր մնա «ՅՈՒԿՕՍ»-ի համար: Ի վերջո ընկերության լուծարման և սնանկացման գործընթացի արդյունքում նրա գույքը անցավ «Գազպրոմ» և «Ռոսնեֆտ» պետական ընկերություններին:

90-ական թվականներից Վ. Պուտինը կարևոր հետևություններ էր կատարել: Նա հասկացել էր, որ տնտեսական զարգացման համար անհրաժեշտ էր աշխուժություն մտցնել այդ միջավայրում և խթանել այն խավը, որն ուներ տնտեսական աճի ռեսուրս, սակայն օբյեկտիվ պատճառներով հնարավորություն չուներ լիարժեք կերպով դրսևորել իրեն շուկայում: Խոսքը միջին և մանր բիզնեսի մասին էր: Այդ նպատակով ՌԴ-ի կառավարությունը նախագահի ցուցումով նախապատրաստեց մի շարք օրինագծեր: Նոր օրենքով տնտեսվարող սուբյեկտների համար հարկային շեմը իջեցվեց մինչև 13%: Ավելի ուշ, որոշ դեպքերում ավելացված արժեքի հարկը (ՀՄԸ) հանվեց¹: Սա բավականին լուրջ քայլ էր: Բացի տնտեսական միջավայրի աշխուժացման օբյեկտիվ պատճառներից այս քայլը ուներ նաև ենթատեքստ: Կրեմլը ձեռք էր բերում կայուն հարկատու հատված, հակակշռում էր մոնոպոլ բուրժուազիային և դրանով վերածվում գործադիր իշխանության դաշնակցի: Ասվածը հիմնավորվում է 2002-2004 թթ. ՌԴ-ի տնտեսական աճով, որը կազմեց շուրջ 7%²: Նոր խախաղի կանոնները «ձեռնտու» չէին մոնոպոլիստներին, քանի որ նրանք կարող էին գործել և ծաղկել միայն պետական հովանավորության պայմաններում:

Չաջորդ առանցքային քայլը վերաբերում էր Ռուսաստանի պատմության մեջ ամենացավազին խնդրին՝ հողի հարցին: 90-ականների ընթացքում ոչ մեկը չէր տվել այդ խնդրի լուծման բանալին: Խնդրի լուծումը Կրեմլի նոր թիմը տվեց շատ պարզ ձևով: 2001 թ. սեպտեմբերին ընդունվեց «Հողային կանոնադրությունը»³: Այստեղ ուշադրություն ենք հրավիրում կանոնադրություն բառի վրա: Այն ամրագրում էր հողի նկատմամբ սեփականության իրավունքի տարածման ձևը, ինչպես նաև հողի առք ու վաճառքի իրավունքը: Սակայն կար մեկ նրբություն: Այն չէր տարածվում գյուղատնտեսական նպատակներով մշակվող հողատարածքների վրա: Այսինքն՝ հողի օրենքը բաժանվեց երկու մասի՝ մասնավոր և գյուղատնտեսական: Եթե նկատի ունենանք, որ ՌԴ-ի տարածքի ավելի քան 75% օգտագործվում էր գյուղատնտեսական նպատակներով, ապա պարզ է դառնում մոտեցման ողջ տրամաբանությունը: Միևնույն ժամանակ Կրեմլը շատ լավ գիտակցում էր, որ մնան պայմաններում արտասահմանյան գործարարները շահագրգռված չէին լինի ներդրումներ կատարել երկրի ծայրամասերը, որն անհրաժեշտ էր ՌԴ-ի սուբյեկտների հավասար և զուգնթաց զարգացման համար: Որոշվեց փոխհատուցել այս բացը: Արդյունքը 2003 թ. դեկտեմբերին «Անտառային կանոնադրության» փոփոխությունն էր, որն ի տարբերություն նախկին վիճակի հնարավորություն էր տալիս անտառային տնտեսության առանձին հատվածների գնումն ու բնակելի նպատակներով շահագործումը ոչ միայն ՌԴ-ի քաղաքացիներին, այլև օտարերկրյա քաղաքացիներին⁴: Սա խիստ ան-

¹ Стен Собрания законодательства РФ, 2002, № 3, с. 226:

² Стен Национальная экономика: учебник, под ред. П. Савченко, М., 2005, с. 342:

³ Стен «Парламентская газета», № 204-205, 30.10.2001:

⁴ Стен Собрание законодательства РФ, 2001, № 44, ст. 4147:

անհանգստացրեց Ռուսաստանի Ազգային կուսակցությանը և Կոմկուսին: Նրանց անհանգստությունը՝ կապված հողային և անտառային կանոնադրության հետ, թերևս, չափազանցված էր: Այստեղ ավելի շուտ խնդիր էր դրված պահպանելու իրենց ընտրազանգվածի սոցիալական բողոքը, որն իբրև առանցքային կետ մշտապես տեղ էր գտնում պառլամենտական և նախագահական ընտրություններում: Սա, իհարկե, թուլացնում էր ձախ ուժերի դիրքերը: Այստեղ կարևոր է մեկ այլ բան: Հողի հարցը, որպես այդպիսին, արդեն դադարեց հասարակական-քաղաքական քննարկման առարկա լինելուց:

ՌԴ-ի բնակչության համար 2000-2004 թթ. սոցիալ-տնտեսական բարելավման տարիներ էին: Վ. Պուտինը և նրա թիմը իրենց առաջնահերթություններից էին համարում հասարակության որոշ շերտերի սոցիալական ապահովությունը: Հատուկ տեղ էր տրվում Հայրենական մեծ պատերազմի վետերաններին և թոշակառուներին¹: Կրեմլի կողմից այս խավերի նկատմամբ ուշադրությունը չի բացատրվում միայն բարոյական նորմերով: Այստեղ ավելի շուտ կյանքի որակի բարձրացման խնդիր էր դրված: Նոր նախագահը ցանկանում էր անջատել կենսական մինիմումի նորմերն ու պատկերացումները շուկայական տնտեսության աղավաղված սկզբունքներից, որոնք տեղ էին գտել ՌԴ-ում: Սա էր Վ. Պուտինի՝ հասարակության սոցիալական ապահովման առանցքը: Նույն մոտեցումը կիրառվեց ՌԴ-ի բյուջետային աշխատողների նյութական պայմանների բարելավման հարցում: Այս մոտեցումը ուներ իր երկրորդ կողմը և թելադրված էր ոչ միայն բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների բարելավման ձգտումով, այլև նպատակ ուներ բարձրացնել բյուջետային հատվածի սոցիալական կարգավիճակը՝ այն դարձնելով պետության կայուն հենարան: Այս միջոցառումները բավական աշխուժություն մտցրեցին երկրի սոցիալ-տնտեսական միջավայրում: 1999-2003 թթ. ընթացքում գրանցվեց տնտեսական աճ և սղաճի կրճատում, որը 36% -ից իջավ 7%-ի²:

Գնահատելով 2000-2005 թթ. Վ. Պուտինի քայլերը՝ կարող ենք ասել, որ դրանք ուղղված էին ՌԴ-ի քաղաքական համակարգում տեղ գտած վտանգավոր զարգացումների վերացմանը: Առաջինը ՌԴ-ի միասնության պահպանումն էր և 1990-ական թվականներից ժառանգություն մնացած վարչա-տարածքային խնդիրների կարգավորումը: Վ. Պուտինին հաջողվեց օգտագործել Կրեմլի ձեռքում գտնվող բոլոր լծակները և կայունություն մտցնել իշխանական բուրգում՝ վերահսկելի և կառավարելի դարձնելով զարգացումները ՌԴ-ի գործադիր իշխանության ներսում: Այնուհանդերձ, ՌԴ-ի կառավարության 2000-2004 թթ. գործունեության ուղղվածությունը սոցիալական չէր: Կրեմլի քայլերը որոշ չափով մեղմեցին հասարակության որոշ շերտերի սոցիալական դրությունը, սակայն ընդհանուր իրավիճակի մեջ այն բարելավում չբերեց: Տասնյակ միլիոնավոր մարդիկ դեռ ապրում էին աղքատության շեմին: ՌԴ-ում դեռևս պահպանվում էր հասարակության սոցիալական խիստ բևեռվածությունը: Այս փաստերը մեզ բերում են այն համոզման, որ Վ. Պուտինը 2000-2004 թթ. խնդիր ուներ միայն կայունացնել ՌԴ-ի սոցիալ-տնտեսական միջավայրը՝ 1990-ական թվականների սոցիալական վայրիվերումներից հետո: Առաջնային խնդիր էր դրված Կրեմլի հսկողության տակ վերադարձնել պետության ռազմավարական ռեսուրսները, իսկ լայն հասարակության շրջանում կատարվող քայլերը ընտրողական

¹ Стів Соґрин В., Политическая история современной России 1985-2000 гг., М., 2001, с. 246:

² Стів История России XX начала XI века, под ред. Л. Милова, М., 2006, с. 931:

էին և նպատակ ունեին պահպանել ՌԴ-ի սոցիալ-տնտեսական միջավայրի նոր կանոնները:

Арсен Григорян, Обновление политической системы Российской Федерации (2000-2005) - В статье анализируется политическая система России. Рассмотрены основные вопросы 90-ых, которые нашли отражение в социально-экономических и административных реформах Путина. Объяснены основные причины и цели реформ новой кремлевской администрации с 2000 по 2005 годы.

Arsen Grigoryan , Renewal of the political system of the Russian Federation (2000-2005) - This article analyses the political system of Russia, the core issues of 90th, which are reflected in the socio-economical and administrative reforms of Putin. The reasons and goals of the reforms by the Kremlin administration are explained.

